



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

« 14 » « դեկտեմբեր » 2019 թ. № 739-Ա

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Նշանակել ծառայողական քննություն գլխավոր քարտուղարի տեղակալ Ա. Ավայանի 2019 թվականի հոկտեմբերի 30-ի (մտ. 71992) զեկուցագրում նշված փաստերի դեպքերով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցն է՝

1) 2019 թվականի ընթացքում նախարարություն մուտքագրված ջրօգտագործման թույլտվությունների հայտերի ընդունման կամ մերժման սահմանված ժամկետների խախտման պատճառները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով.

1) Աշոտ Ավայան - գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,

2) Նաիրա Ալավերդյան - քարտուղարության պետ,

3) Արմինե Հովհաննիսյան - իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 7 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունն անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ԶԻԼԱՎՅԱՆ

12/17/2019

X

ՎԱՅԵ ԶԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

<< 17 >> դեկտեմբերի 2019թ.
 ք. Երևան